Սոցիալական Ապահովության Համարներ Ոչ Քաղաքացիների Համար

Ինչպե՞ս կարող եմ Սոցիալական Ապահովության համար ստանալ

Այն ոչ քաղաքացիները,որոնք ունեն աշխատելու թույլտվություն Հայրենիքի Ապահովության Վարչությունից (DHS), կարող են Սոցիալական Ապահովության համար ստանալու դիմում ներկայացնել: Սոցիալական Ապահովության համար ստանալու համար .

- Լրացրեք *Սոցիալական Ապահովության քարտ ստանալու դիմումնագիրը* (Ձեւաթուղթ SS-5-AM) եւ
- Ցույց տվեք մեզ բնագիր փաստաթղթեր, որոնք հաստատում են ձեր.
  - —Ներգաղթի կարգավիճակը.
  - —Աշխատելու իրավունքը.
  - —Տարիքը եւ
  - —Ինքնությունը:
- Ներկայացուցեք ձեր լրացված դիմումնագիրը ու փաստաթղթերի բնագիր օրինակները Սոցիալական Ապահովության ձեր տեղական գրասենյակին:

Ներգաղթի կարգավիճակը

Ձեր ԱՄՆ ներգաղթի կարգավիճակը ապացուցելու համար դուք պետք է ցույց տաք մեզ ԱՄՆ ներգաղթի վավերական փաստաթուղթ, I-94-ը՝ *Arrival/Departure Record* (*Ժամանման/Մեկնման Յուցագիրը*), որը ձեզ տրվել է Միացյալ Նահանգներ ժամանելու պահին: Եթէ դուք F-1 կամ M-1 դպրոցական ուսանող եք, դուք պետք է նաեւ մեզ ներկայացնեք ձեր I-20-ը՝ *Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status* (*Ուսանողի Ոչ Ներգաղթային Կարգավիճակի Իրավասության Վկայականը*): Եթէ դուք J-1 կամ J-2 փոխանակման կարգով ժամանած այցելու եք, դուք պետք է ներկայացնեք ձեր DS-2019-ը՝ *Certificate of Eligibility for Exchange Visitor (J-1) Status* (*Փոխանակման կարգով ժամանած այցելուի կարգավիճակի իրավասության վկայականը*):

Աշխատելու իրավունքը

Օտարերկրյա աշխատողների մեծամասնության համար մենք միայն պետք է տեսնենք I-94-ը՝ *Ժամանման/Մեկնման Յուցագիրը*: Որոշ օտարերկրյա աշխատողներ պետք է նաեւ ցույց տան Հայրենիքի Ապահովության Վարչությունից իրենց տրված աշխատանքի թույլտվության քարտը (I-766 կամ I-688B): Միջազգային ուսանողները պետք է ներկայացնեն յաւելյալ փաստաթղթեր: Մանրամասն տեղեկության համար կարդացեք *Միջազգային Ուսանողներ եւ Սոցիալական Ապահովության Համարներ* հրատարակությունը (Հրատարակության համար 05-10181-AM):

Տարիքը

Դուք պետք է ներկայացնեք ձեր ծննդյան վկայականը՝ եթէ ունեք կամ կարող եք հեշտությամբ ստանալ զայն: Եթէ ոչ, մենք կարող ենք ընդունել այլ փաստաթղթեր, օրինակ ձեր անցագիրը կամ Հայրենիքի Ապահովության Վարչության (DHS) կողմից տրված փաստաթղթեր, որոնք հաստատում են ձեր տարիքը:

Ինքնության հաստատումը

Որպես ինքնության հաստատում մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Ընդունելի փաստաթուղթը պետք է լինի վավերական (ոչ ժամկետանց), ցույց տալով ձեր անունը, ազգանունը եւ ինքնությունը հաստատող տեղեկություն: Ցանկալի է որ այն ունենա վերջերս հանված լուսանկար: Սոցիալական Ապահովությունը պահանջում է ԱՄՆ ներգաղթի ձեր վավերական փաստաթղթերը: Ներգաղթի ընդունելի փաստաթղթերն ընդգրկում են.

- Ձեւաթուղթ I-551-ը (ներառում է մեքենայով կարդացվող ներգաղթի վիզան որ գտնվում է ձեր օտարերկրյա ոչ ժամկետանց անցագրի մէջ).
- I-94-ը ձեր օտարերկրյա ոչ ժամկետանց անցագրով կամ
- Հայրենիքի Ապահովության Վարչության կողմից տրված աշխատանքի թույլտվության քարտը (I-766 կամ I-688B):

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն բնագիր կամ վավերացված այն կազմակերպության կողմից որ զանոնք պարենաւորած է: Մենք չենք կարող ընդունել կրկնօրինակներ կամ նոտարի կողմից հաստատված փաստաթղթեր: Մենք նաեւ չենք կարող ընդունել ստացագիրներ որոնք ցույց են տալիս թէ դուք սպասում եք մեր պահանջած փոստաթղթերին: Մէկ փաստաթուղթը մենք կարող ենք օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք Հայրենիքի Ապահովության Վարչության կողմից ձեզ տրված աշխատանքի թույլտվությունը օգտագործել որպես աշխատելու իրավունք եւ ինքնությունը հաստատելու վկայություն: ***Այնուամենայնիվ, դուք պետք է ներկայացնեք երկու տարբեր փաստաթղթեր:***

Մենք կուղարկենք ձեր Սոցիալական Ապահովագրության համարն ու քարտը ձեր փաստաթղթերը ստուգելուց հետո: Համարի սպասման ընթացքում, ձեր գործատէրը կարող է օգտագործել մեր կողմից տրված սգացագիրը որում նշվում է որ դուք դիմում ներկայացրել եք համար ստանալու: Ձեր գործատէրը նաեւ կարող է օգտագործել ձեր ներգաղթի փաստաթղթերը որպես Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվության

(շրջել)

վկայություն: Գործատէրերը կարող են գտնել յաւելյալ տեղեկություն համացանցի մեր կայքէջում ***www.socialsecurity.gov/employer/hiring.htm***:

Ես ի՞նչ պետք է անեմ, եթե Սոցիալական Ապահովության համարի կարիքը ունենամ հարկեր վճարելու համար

Եթէդուք Սոցիալական Ապահովության համարի կարիք ունեք հարկային նպատակներով բայց չունեք Միացյալ Նահանգներում աշխատելու իրավունք, դուք կարող եք դիմել Ներքին Հարկային Վարչության (IRS) ստանալու հարկ վճարողի անհատական համար: Անձամբ այցելեք Ներքին Հարկային Վարչության գրասենեակը կամ զանգահարեք հետեյալ անվճար թվին **1-800-TAXFORM** (**1-800-829-3676**) եւ խնդրեցեք *Application for An Individual Taxpayer Identification Number* (Form W-7) , (Ձեւաթուղթ W-7-ը՝ *Հարկ Վճարողի Անհատական Համար Ստանալու Դիմումնագիր*):

Արդյո՞ք ես համարի կարիք ունեմ կառավարական այլ ծառայությունների հետ կապված

Օրինական հիմունքներով ընդունված ոչ քաղաքացիները կարող են ստանալ բազմաթիւ նպաստներ եւ ծառայություններ առանց Սոցիալական Ապահովության համար ունենալու: Դուք համարի կարիքը չունեք խնայողական պարտատոմսեր գնելու, դրամատուններու հետ գործառնություն կատարելու, դպրոց արձանագրվելու, կրթական քննություններու մասնակցելու, բժշկական ապահովագրություն գնելու, եւ դիմելու դպրոցական ճաշերի կամ բնակարանի վարձքի օժանդակության ծրագրիներու:

Դուք չեք կարող ստանալ Սոցիալական Ապահովության համար միակ վարորդական իրավունք ստանալու նպատակով:

Եթէ դուք չունեք աշխատելու իրավունք, դուք կարող եք Սոցիալական Ապահովության համար ստանալու դիմում ներկայացնել միայն եթե.

- Դաշնակցային օրէնքով պահանջվում է, որ որոշակի նպաստ կամ ծառայություն ստանալու համար դուք ներկայացնեք ձեր Սոցիալական Ապահովության համարը կամ
- Նահանգային կամ տեղական օրէնքով պահանջվում է ներկայացնել ձեր Սոցիալական Ապահովության համարը, որպեսզի ստանաք ընդհանուր օգնության այն նպաստները, որոնց դուք արդեն իրավասու եք:

Որպեսզի ստանաք Սոցիալական Ապահովության համար նահանգային կամ տեղական կառավարության պահանջը գոհացնելու նպատակով, դուք պետք է ներկայացնեք գրավոր նամակ այն կառավարական գործակալությունից, որը ձեզանից պահանջում է համարի ստացումը: Այս նամակը պետք է անպայման լինի բնագիր եւ ըլլայ այդ գործակալության նամակաթղթի վրայ: Այդ գրությունը պետք է.

- Հստակօրէն ձեր ինքնությունը ճշդի որպես դիմող անհատ.
- Նշի այն օրէնքը, որը ձեզնից պահանջում է Սոցիալական Ապահովության համար ունենալը.
- Նշի, որ դուք բավարարում եք գործակալության բոլոր պահանջներին, բացի Սոցիալական Ապահովության համար ունենալը. ինչպես նաեւ
- Պարունակի գործակալության պաշտոնյայի անունն ու հեռախոսահամարը:

Եթէ ձեզ տրվի աշխատանքի չվավերացված Սոցիալական Ապահովության համար, դուք չեք կարող այն օգտագործելով աշխատիլ: Եթէ դուք օգտագործեք այդ համարը եւ աշխատեք, մենք կը տեղեկացնենք Հայրենիքի Ապահովության Վարչության:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՝կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10096-AM
Social Security Numbers For Noncitizens (Armenian)
December 2005